# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 236-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 15 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի՝ հերթական թիվ 15 նիստի հետևյալ օրակարգը.

1. Գառնիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և դրույքաչափը հաստատելու մասին
2. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2026 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի տեղական տուրքերի և վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանին հավանություն տալու մասին
7. Գառնի համայնքի համայնքային սեփականության գույքի 2026թ. Գույքագրման փաստաթղթերի հաստատումը
8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների

իրականացման նկատմամբ իրականացված իրավական հսկողության արդյունքների քննարկման մասին

9. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
10. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին
11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին
12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին
13. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
14. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին
15. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 237-Ա

## ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՔԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 237-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

## <u>ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ</u>

1. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
2. Քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողաշինության բաժին

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 237-Ա ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2026ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

**Աշխատակիցների թվաքանակը 50**

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Պաշտոնի ծածկագիր | Հաստիքի միավոր | Պաշտոնային դրույքաչափ (ՀՀ դրամ) | Հավելավճար (ՀՀ դրամ) | Աշխատավարձի չափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 550000 | | 550000 |
| 2 | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | | 1 | 440000 | | 440000 |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 404000 | | 404000 |
| | ***Ընդամենը*** | | ***3*** | ***1394000*** | | ***1394000*** |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | | |
| | Համայնքի ղեկավարի խորհրդական | | 1 | 323000 | | 323000 |
| | Համայնքի ղեկավարի օգնական | | 1 | 323000 | | 323000 |
| | Համայքնի ղեկավարի տեղակալի օգնական | | 1 | 231000 | | 231000 |
| | ***Ընդամենը*** | | ***3*** | ***877000*** | | ***877000*** |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | | | | | | |
| | Անասնաբույժ | | 1 | 189000 | | 189000 |
| | Անասնաբույժ | | 1 | 137000 | | 137000 |
| | ***Ընդամենը*** | | ***2*** | ***326000*** | | ***326000*** |
| ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | | |
| | Գողթ գյուղի վարչական ղեկավար | | 1 | 346000 | | 346000 |
| | Ողջաբերդ գյուղի վարչական ղեկավար | | 1 | 323000 | | 323000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Գեղաձոր գյուղի վարչական ղեկավար | | 1 | 323000 | | 323000 |
| | Հացավան գյուղի վարչական | | 1 | 311000 | | 311000 |
| | Գեղարդ գյուղի վարչական ղեկավար | | 1 | 311000 | | 311000 |
| | ***Ընդամենը*** | | ***5*** | ***1614000*** | | ***1614000*** |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔՆԵՐ | | | | | | |
| | Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | ***438000*** | **109500** | **547500** |
| **Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին** | | | | | | |
| | Բաժնի պետ | 2.1-1 | 1 | 404000 | 80800 | 484800 |
| | Գլխավոր մասնագետ | 2.3-1 | 1 | 381000 | 76200 | 457200 |
| | Առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 311000 | | 311000 |
| | Առաջատար մասնագետ-Օպերատոր | 3.1-3 | 1 | 311000 | | 311000 |
| | Առաջատար մասնագետ-Օպերատոր | 3.1-4 | 1 | 311000 | 77750 | 388750 |
| | Առաջատար մասնագետ-Օպերատոր | 3.1-6 | 1 | 311000 | | 311000 |
| | Առաջատար մասնագետ-Օպերատոր | 3.1-5 | 1 | 311000 | | 311000 |
| | Առաջատար մասնագետ-Օպերատոր | 3.1-7 | 1 | 311000 | | 311000 |
| | Առաջատար մասնագետ-Օպերատոր | 3.1-2 | 1 | 311000 | 77750 | 388750 |
| | ***Ընդամենը*** | | ***9*** | ***2962000*** | ***312500*** | ***3274500*** |
| **Քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողաշինության բաժին** | | | | | | |
| | Բաժնի պետ | 2.1-2 | 1 | 404000 | | 404000 |
| | Գլխավոր մասնագետ | 2.3-2 | 1 | 381000 | 87630 | 468630 |
| | Գլխավոր մասնագետ | 2.3-3 | 1 | 381000 | 95250 | 476250 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Առաջատար մասնագետ | 3.1-9 | 1 | 311000 | | 311000 |
| | 1-ին կարգի մասնագետ | 3.2-3 | 1 | 265000 | | 265000 |
| | | | | | | |
| | ***Ընդամենը*** | | 5 | **1742000** | **182880** | ***1924880*** |
| **Աշխատակազմ կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ** | | | | | | |
| | Գլխավոր մասնագետ-Սոցիալական աշխատող | 2.3-4 | 1 | 381000 | 87630 | 468630 |
| | Գլխավոր մասնագետ-իրավաբան | 2.3-5 | 1 | 381000 | | 381000 |
| | Գլխավոր մասնագետ-կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի | 2.3-6 | 1 | 381000 | | 381000 |
| | Առաջատար մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպչի | 3.1-11 | 1 | 311000 | 31100 | 342100 |
| | Առաջատար մասնագետ-Զարգացման ծրագրի | 3.1-12 | 1 | 311000 | | 311000 |
| | Առաջատար մասնագետ | 3.1-13 | 1 | 311000 | | 311000 |
| | Առաջատար մասնագետ | 3.1-14 | 1 | 311000 | | 311000 |
| | 1-ին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 265000 | | 265000 |
| | 1-ին կարգի մասնագետ | 3.2-3 | 1 | 265000 | | 265000 |
| | 1-ին կարգի մասնագետ | 3.2-4 | 1 | 265000 | | 265000 |
| | | | | | | |
| | ***Ընդամենը*** | | *10* | **3182000** | ***118730*** | **3300730** |
| | | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ***Տեխնիկական սպասարկման աշխատակազմ*** | | | | | |
| Վարորդ | | 2 | 242000 | | 484000 |
| Էլեկտրիկ | | 1 | 169000 | | 169000 |
| Բանվոր | | 1 | 217000 | | 217000 |
| Գործավար | | 1 | 241000 | | 241000 |
| Հավաքարար | | 0.75*2 | 184000 | | 276000 |
| Հավաքարար | | 0.375*4 | 184000 | | 276000 |
| Տնտեսվար | | 1 | 242000 | | 242000 |
| ***Ընդամենը*** | | *12* | ***1479000*** | | **1905000** |
| ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | | ***50*** | ***14014000*** | ***723610*** | ***15163610*** |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 238-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասի պահանջներով, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել «Գառնիի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել «Գառնիի երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հաստատել «Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոն» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը ևպաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Հաստատել «Գառնիի մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 4 հավելվածի:

5. Հաստատել «Գեղադիր համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի աշխատակիցներ իքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 5 հավելվածի:

6. Հաստատել «Գառնիի համայնքի Գողթ գյուղի մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 6 հավելվածի

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՔԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ  ԹԻՎ 239-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ, 85-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 31-րդ հոդվածով, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2026 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածների:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավարին 2026 թվականի բյուջեի կատարման ընթացքում կատարել ավագանու որոշմանը չհակասող վերաբաշխումներ բյուջեի 15 տոկոսի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագող իրավահարաբերությունների վրա:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ   ԹԻՎ 240-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածով, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի տեղական տուրքերի և վճարների 2026 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագող իրավահարաբերությունների վրա:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 240-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի տեղական տուրքերի և վճարների 2026 թվականի դրույքաչափերը

*1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները.*

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)թույլտվության համար.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների եւ քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առեւտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «<<Առևտրի և ծառայությունների մասին»>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների .

12) Գառնի համայնքի խորհրդանիշը (անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու համար, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու համար.

13) Գառնի համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման եւ (կամ) մատուցման թույլտվության համար.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար:

2. ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները***

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու եւ հաստատելու համար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի եւ շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար .

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաեւ աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար.

9) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.

11) համայնքի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար.

12) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների՝ (երաժշտական, Գեղարվեստի և մարզամշակութային կենտրոնի ) ծառայություններից օգտվողների համար.

13) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

14) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.

15) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար.

16)համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

17) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար.

18) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար:

***3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերն են.***

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար:

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար ՝ 15000 դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ,

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝ 100000 դրամի, և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200000 դրամի, և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող

մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝ 3000դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝ 5000 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝ 3000 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա)

շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ ՝ 5000 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման

և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար կիրառելով 0.5 գործակից ՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար կիրառելով 0.5 գործակից ՝25000դրամ.

7) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 3000 դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դամ կիրառելով 0.3 գործակից ՝ 3900 դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 6000 դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 7500 դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 13500 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝100000դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 30000դրամ

բ. Օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000դրամ կիրառելով 0.3 գործակից ՝3000դրամ ՝

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 3900դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20000դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 6000դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝25000դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 7500դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 13500դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝100000դրամ կիրառելով 0.3 գործակից ՝ 30000 դրամ

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար՝.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000դրամ, կիրառելով 0.5 գործակից ՝2500դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60000դրամ, կիրառելով 0.5 գործակից ՝30000դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 300000դրամ, կիրառելով 0.5 գործակից ՝150000դրամ

դ. խաղատների համար՝ 800000դրամ, կիրառելով 0.5 գործակից ՝400000դրամ

ե. շահումով խաղերի համար՝ 400000դրամ, կիրառելով 0.5 գործակից ՝200000դրամ

զ. վիճակախաղերի համար՝ 120000դրամ. կիրառելով 0.5 գործակից ՝60000դրամ

10)համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 30000դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 50000 դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2000 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4000դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8000դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000դրամ

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության

համար, բացառությամբ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Գառնի համայնքի խորհրդանիշը (անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13) Գառնի համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությջունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

***4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝***

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության

ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ,

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ 5000 ՀՀ դրամ:

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ համաձայն «Աղբահանության և[redacted]սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ՝ յուրաքանչյուր ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան 150 դրամ,

8) համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի համապատասխան ՝ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի՝ Գառնի համայնքի ավագանին սահմանում է հետևյալ դրույքաչափերը

| ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ_ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ | | | |
|---|---|---|---|
| **N** | **օբյեկտներ** | **օրենքով սահմանված դրույքաչափ** | **ավագանու կողմից սահմանված դրույքաչափերը** |
| 1 | խանութներ | 1մ² = 50-100 դրամ | 1մ² = 50 դրամ |
| 2 | շուկաներ | 1 մ² = 50-100 դրամ | 1 մ² =100 դրամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | հանրային սնունդ | 1 մ$^2$ = 50-100 դրամ | 1 մ$^2$ = 50 դրամ | |
| 4 | բնակչության սպասարկում | 1 մ$^2$ = 50-100 դրամ | 1 մ$^2$ = 50 դրամ | |
| 5 | հյուրանոցներ | 1 մ$^2$ = 20-50 դրամ | 1 մ$^2$ = 20 դրամ | |
| 6 | այլ հասարակական շինություններ | 1 մ$^2$ = 20-50 դրամ | 1 մ$^2$ = 20 դրամ | |
| 7 | արտադրական շինություններ | 1 մ$^2$ = 5-15 դրամ | 1 մ$^2$ = 10 դրամ | |
| 8 | արդյունաբերական շինություններ | 1 մ$^2$ = 5-15 դրամ | 1 մ$^2$ =15 դրամ | |
| 9 | գրասենյակներ | 1 մ$^2$ = 5-15 դրամ | 1 մ$^2$ = 5 դրամ | |
| 10 | կրթական հիմնարկներ | 1 մ$^2$ =3-15 դրամ | 1 մ$^2$ =3 դրամ | |
| 11 | մշակույթի հիմնարկներ | 1 մ$^2$ =3-15 դրամ | 1 մ$^2$ =15 դրամ | |
| 12 | առողջապահական հիմնարկներ | 1 մ$^2$ =3-15 դրամ | 1 մ$^2$ =5 դրամ | |
| 13 | սպորտային հիմնարկներ | 1 մ$^2$ =3-15 դրամ | 1 մ$^2$ =3 դրամ | |
| 14 | գիտահետազոտական | 1 մ$^2$ =3-15 դրամ | 1 մ$^2$ =3 դրամ | |

9) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ 2000 դրամ .

**5. Ոչ կենցաղային աղբի համար աղբահանության վճարը սահմանվում է՝**

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

3) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի համար՝ 100 ՀՀ դրամ:

4) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20 (1 քմ. համար) ՀՀ դրամ:

5) համայնքային ենթակայության «Գառնիի մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար՝ 5000 դրամ (ամսական), համայնքային ենթակայության «Գեղադիր համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող, յուրաքանչյուր երեխայի համար՝ 5000 դրամ (ամսական), համայնքային ենթակայության «Գառնի համայնքի Գողթ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար՝ 5000 դրամ (ամսական),:

6) «Գառնիի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ում յուրաքանչյուր սովորողի համար՝ 2500 դրամ (ամսական), նույն ընտանիքից երկուսից ավելի երեխաների հաճախման դեպքում երրորդ երեխայի ուսման վարձը սահմանել անվճար, երկու և ավել խմբակ հաճախելու դեպքում, յուրաքանչյուրից գանձել սահմանված վճարի չափի 50%-ը:

7) «Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոն» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ում սովորողների համար՝ 2000 դրամ (ամսական):

8) «Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոն» արտադպրոցական կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ում սովորողների համար՝ պար 2000 դրամ (ամսական):

9) «Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոն» արտադպրոցական կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ում Կառատե - Դո Շոտոկան արևելյան մարտարվեստի համար՝ 5000 դրամ (ամսական):

10) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 դրամ:

11) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով՝ 300 դրամ:

12) Բնության հուշարձան Քարերի սիմֆոնիա յուրաքանչյուր այցելուի համար՝ 300 դրամ:

13) Ջրամատակարարման ծառայության դիմաց ՝ ջրօգտագործող տնտեսությունների համար 1000 դրամ ամսեկան, ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր ջրի համար՝ 100 (հարյուր) դրամ կամ՝ ոչ կենցաղային նպատակով ջրօգտագործող տնտեսությունների և իրավաբանական անձանց մեկ $մ^3$ ջրօգտագործման համար՝ 120 դրամ:

14) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000:

15) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, համայնքապետարանի վարչական շենքի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան տուրքի դրույքաչափ սահմանել կիրառելով կանխավճարային կտրոնային համակարգ՝ մինչև 12 տեղանոց թեթև մարդատար մեքենաների յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 200 դրամ, մեկ օրվա համար՝ 1500 դրամ, մեկ շաբաթվա համար՝ 3000 դրամ, մեկ ամսվա համար՝ 15000 դրամ մեկ տարվա համար՝ 70000 դրամ, իսկ ավտոբուսների և բեռնատար ավտոմեքենաների մեկ ժամվա համար՝ 300 դրամ մեկ օրվա համար՝ 2000 դրամ, մեկ շաբաթվա համար 4000 դրամ մեկ ամսվա համար՝ 20000 դրամ, մեկ տարվա համար՝ 90000 դրամ:

16) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 դրամ փոխհատուցման վճար:

17) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար՝ 200 դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ Garni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ   ԹԻՎ 241-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ պաշտոնային դրույքաչափը սահմանել ամսական 550000 (Հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ

«25» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 242-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Գառնի համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանին՝ համաձայն հավելվածի:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

**ՈՐՈՇՈՒՄ**

«25» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 243-Ա

**ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ 2026Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդված ի 1-ին մասի 32 կետով, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Կոտայքի մարզի, Գառնի համայնքի համայնքային սեփականության գույքի 2026թ. գույքագրման փաստաթղթերը, դեբիտորական և կրեդիտային պարտքերի հաշվառումով, համաձայն՝ հավելվածների:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՔԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

**ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ   ԹԻՎ 244-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի աշխատակազմի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ՝ Կոտայքի մարզի Գառնի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված իրավական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 01 արձանագրությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը՝ 2024 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ՝ Կոտայքի մարզպետի աշխատակազմի կողմից համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացված իրավական հսկողության արդյունքում կազմված արձանագրության վերաբերյալ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ թիվ 01 արձանագրությամբ նշված թերությունները, խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու և շտկելու ուղղությամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 245-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող 07-021-0384-հց 0.34825 հա ծածկագրերով հողամասերի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող 07-021-0384-հց 0.34825 հա ծածկագրերով հողամասերի նկատմամբ:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | [signature] | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | [signature] | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | [signature] | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 246-Ա

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով. ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

Գառնի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից (գյուղատնտեսության այլ, վարելահող, արոտավայր) վարձակալության իրավունքով տրամադրել՝ համաձայն հավելվածի

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1
Գառնի համայնքի ավագանու
«24» դեկտեմբերի 2025 թվականի
N 221-Ա որոշման

Կոտայքի մարզի Գառնի համայնքի համայնքային սեփականության հողերից հրապարակային սակարկման միջոցով վարձակալվող հողակտորների և մեկնարկային գնի ցանկը

| Հ/Հ | Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը | Մակերեսը հա | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը (դրամ) | Ժամկետի սահմանում (տարի) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | 07-026-0153-0084 | 1.72413 | Գյուղատնտեսական արոտավայր | 60000 | 10 |
| 2 | 07-021-0255-0035 | 2.12026 | Գյուղատնտեսական արոտավայր | 80000 | 10 |
| 3 | 07-026-0213-0121 | 0.605 | Գյուղատնտեսական արոտավայր | 10000 | 10 |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 247-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով Առնո Մոսիկյանի դիմում խնդրանքը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի ***Առնո Ֆրանցի Մոսիկյանին*** սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գեղարդ գյուղում գտնվող 07-024-0007-0060 կադաստրային ծածկագիր 1.09357 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատեսք հողամասին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 07-024-0007-0068 կադաստրային ծածկագրի հողատեսք՝ 0.12229 հա մակերեսով, օտարել նրան ուղղակի վաճառքի ձևով, կադաստրային արժեքով՝ /1493200/ ՀՀ դրամ հողամասի ընդլայնման նպատակով:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 7-ի «Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու եվ ուղղակի վաճառքի ձեվով օտարելու թույլտվություն տալու մասին» N 197-Ա որոշումը:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 248-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով Աշոտ Քոչարյանի դիմում խնդրանքը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի ***Աշոտ Շուրայի Քոչարյանին*** սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գեղարդ գյուղում գտնվող 07-041-0117-0059 կադաստրային ծածկագիր 0.30256 հա մակերեսով գյուղատնտեսական այգի հողատեսք հողամասին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական այլ 07-041-0117-0075 կադաստրային ծածկագրի հողատեսք՝ 0.30149 հա մակերեսով, օտարել նրան ուղղակի վաճառքի ձևով, կադաստրային արժեքով՝ /21000/ ՀՀ դրամ հողամասի ընդլայնման նպատակով:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Մ. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 249-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 199-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 250-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով Արսեն Գրիգորյանի դիմում խնդրանքը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի ***Արսեն Սանասարի Գրիգորյանին*** սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող 07-021-0296-0028 կադաստրային ծածկագիր 0.0425 հա մակերեսով գյուղատնտեսական այլ հողատեսք հողամասին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական այլ 07-021-0296-0031 կադաստրային ծածկագրի հողատեսք՝ 0.03815 հա մակերեսով, օտարել նրան ուղղակի վաճառքի ձևով, կադաստրային արժեքով՝ /3000/ ՀՀ դրամ հողամասի ընդլայնման նպատակով:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | [signature] | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | [signature] | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | [signature] | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | [signature] | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 251-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել՝ 2026 թվականի փետրվարի 18-ը, ժամը $17^{00}$:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«24» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 251-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել՝ 2026 թվականի փետրվարի 18-ը, ժամը $17^{00}$:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

| Հ/Հ | ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ | Կողմ -10 | Ձեռնպահ – 0 | Դեմ-0 |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ | | | |
| 2 | ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ | | | |
| 3 | ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| 4 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ | | | |
| 5 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 6 | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱՄ | | | |
| 7 | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ | | | |
| 8 | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ | | | |
| 9 | ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ | | | |
| 10 | ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**